ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՏՎԱՅԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ

Հուլիսի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ« Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Լիտվայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասին:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց դեսպանին նշանակման առիթով եւ արդյունավետ գործունեություն մաղթեց նրան Հայաստանում պաշտոնավարելու ընթացքում:

Զրույցի ժամանակ Վեհափառ Հայրապետը եւ ՀՀ-ում Լիտվայի դեսպանն անդրադարձան երկու ժողովուրդների բարեկամական կապերին, պետությունների դիվանագիտական հարաբերություններին ու ընդլայնվող համագործակցությանը՝ դրանում կարեւորելով նաեւ Լիտվայի հայկական համայնքի դերը:

Մասնավոր անդրադարձ կատարվեց նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու եւ Քույր եկեղեցիների հարաբերություններին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հուլիսի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ« Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Ռումինիայի Մշակույթի նախարար Դանիել Կոնստանդին Բառբուին՝ ուղեկցությամբ ՀՀ Մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանի եւ Ռումինիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Համլետ Գասպարյանի:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց, որ Ռումինիայի հետ հարաբերությունները սերտ են եւ ջերմ՝ համահունչ երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը: Նորին Սրբությունը կարեւորեց երկու նախարարությունների միջեւ համագործակցությունը՝ ավելացնելով, որ Ռումինիայում հայ ժողովրդի՝ դարավոր պատմություն ունեցող մշակութային ներկայությունը եւ հարուստ ժառանգությունը կարեւոր կամուրջ է երկու ժողովուրդների միջեւ:

Վեհափառ Հայրապետը եւ Ռումինիայի Մշակույթի նախարարը զրուցեցին նաեւ երկու ժողովուրդների հոգեւոր կյանքից, Հայ Առաքելական եւ Ռումին Ուղղափառ Եկեղեցիների եղբայրական կապերից: Այս առիթով Ամենայն Հայոց Հայրապետը վերահի-

Իսսամ Նայալին Վեհարանում

Ռումինիայի մշակույթի նախարարը Մայր Աթոռում

շեց իր հովվապետական այցերը Ռումինիա, հանդիպումները Դանիել պատրիարքի եւ երջանկահիշատակ Թեոկտիստ պատրիարքի հետ, նաեւ գոհունակությամբ անդրադարձավ ռումին ժողովրդի քրիստոնեական հավատի խորը ապրումին:

Հանդիպման ավարտին հաջողություն մաղթելով հայ-ռումինական մշակութային գործակցությանը՝ Ամենայն Հայոց Հայրապետը հորդորեց առավել զորացնել երկու ժողովուրդների դարերով փորձված բարեկամությունը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻՆ

Հուլիսի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Իսսամ Նայալին: Հանդիպմանը Նորին Սրբությունը մտահոգությամբ անդրադարձավ Սիրիայում տիրող իրավիճակին՝ խորին ցավ հայտնելով հակամարտության հետեւանքով Սիրիայի ժողովրդի կրած կորուստների եւ պատճառված ավերածությունների համար: Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայոց Եկեղեցին շարունակելու է իր գործակցությունը բերել ծանր կացության մեջ գտնվող Սիրիայի ժողովրդին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն հայտնեց, որ Աստծու օգնականությամբ Սիրիայում խաղաղություն ու համերաշխություն կհաստատվի, եւ Սիրիայի ապրվածասեր ժողովուրդը կվերագտնի իր բնականոն կյանքի ընթացքը: Իր հերթին տիար Իսսամ Նայալը Սիրիայի ժողովրդի անունից երախտագիտություն հայտնեց հայ ժողովրդին եւ Հայոց Եկեղեցուն՝ ցուցաբերած մարդասիրական օգնության համար: Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարը Նորին Սրբությանը փոխանցեց նաեւ Սիրիայի գլխավոր մուֆթի շեյխ Ահմադ Բադր ադ-Դին Հասանի ողջույնները:

Վերջում Վեհափառ Հայրապետը, վերստին կարեւորելով երկու ժողովուրդների դարավոր բարեկամական հարաբերությունների ամրապնդումը, Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարին արդյունավոր առաքելություն մաղթեց Հայաստանում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հուլիսի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Ռուսաստանի Դաշնության Տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարյանի: